

Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի տարածքում նախատեսվող մասնավոր
գերեզմանատան

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<<Էկո Մենեջմենթ>> ՍՊԸ տնօրեն՝

Տ.Նավասարդյան

«Սուսաննա Խաչատրյան Արժրունու» ԱԶ

Երևան 2022

**ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
	Օրենսդրական դաշտ.....	4
2.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6
2.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	6
2.2	Հապավումներ	6
2.3	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	7
	Հիմնական տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ	9
3.	ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ.....	11
3.1	Ընդհանուր տեղեկություններ.....	11
3.2	Աշխարհագրական դիրքը եվ կլիման.....	14
3.3	Հողերի նկարագրությունը և հողերի բնական տիպերի քարտեզը	16
3.4	Մթնոլորտային օդ.....	17
3.5	Աղմուկի մակարդակ	17
3.6	ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՋՐԵՐ	17
3.7	Բուսական և կենդանական աշխարհ.....	20
4.	ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՋՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ.....	28
4.1	Զրոյական տարբերակ.....	28
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.....	28
5.1	Մթնոլորտային արտանետումներ.....	28
5.2	Մթնոլորտային արտանետումներ.....	29
5.3	Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների վերլուծությունը և գնահատումը.....	33
5.4	Տնտեսական վնասի հաշվարկ.....	34
5.5	Զրային ռեսուրսներ	35
5.6	Զրոգտագործում	35
5.7	Զրահեռացում	36
5.8	Թափոնների և այլ նյութերի կառավարումը	36
5.9	Սանիտարա-պաշտպանիչ գոտի /ՄՊԳ/	36
6.	ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	38
5.1	Ռիսկերի գնահատում	38
5.2	Մթնոլորտային օդ.....	38
5.3	Զրային ռեսուրսներ	39

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

5.4	Հողային ռեսուրսներ	39
5.5	Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը.....	40
5.6	Աղմուկ	40
5.7	Կենսաբազմազանություն.....	41
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	43
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	46
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	46

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքում մասնավոր գերեզմանատան կառուցման աշխատաքային նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)

«ՀՀ ջրային օրենսգիրք» /04.06.2002թ./:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)

«Մթնոլորտային օդի մասին» ՀՀ օրենք

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

- 1.2 Ձեռնարկող՝ «Սուսաննա Խաչատրյան Արժրունու» ԱԶ
- 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ Առինջ 5փ, տ 3, անձ.
AF0768394,
- 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ Առինջ 5փ, տ 3, անձ.
- 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ ՀՀ Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնք
- 1.6 Հեռախոս՝
- 1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝

2.2 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

2.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

Գետարգել մասնավոր գերեզմանատուն բացատրագիր

Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի վարչական տարածքում 5.323939 հա գյուղատնտեսական նշանակության հողից 0.1 հա տեղափոխվել է էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության ոլորտ մասնավոր գերեզմանատան կառուցելու նպատակով:

Մասնավոր գերեզմանատունը կազմակերպվելու է <<Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին <<ՀՀ Կառավարության 23.11.2006թ. N1910-Ն որոշմամբ սահմանված նախագծա-նորմատիվային պահանջների համապատասխան:

Համաձայն նշված կարգի գերեզմանատներն տեղադրվում են բնակելի տներից, դպրոցներից, նախադպրոցական, առողջապահական և հասարակական այլ շենքերից ու հանգստի գոտիներից առնվազն 300 մետր հեռավորության վրա:

Գերեզմանատան տարածքը արդեն իսկ պարսպապատված է խուլ քարե պարսպով՝ մոտ 2.5 մ բարձրությամբ: Կանաչապատման լուծումները կներկայացվեն աշխատանքային նախագծի փաթեթում: Նախատեսվում է պարսպի երկայնքով երկշարք տնկել արագաճ բարդիներ:

Գերեզմանատան սանիտարապաշտպանիչ գոտին՝ նախատեսվել է պարսպից (ցանկապատից) առնվազն 10 մետր հեռավորությամբ:

Համաձայն հիշատակված կարգի իրականացվել են տարածքի ինժեներաերկրաբանական հետազոտություններ:

Մուտքի հատվածի անմիջական հարևանությամբ նախատեսվում է տեղադրել բազալտե հանգստի քար, խաչ-հուշակոթող և աղբյուր-խաչքար: Վերջինին մոտ տեղակայվելու է մետաղյա ծածկարանով հանգստի տաղավար:

Տարածքում նախատեսված է պահակատուն և գուգարան(սեպտիկ հորով):

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման Հավելված 4-ի պահանջների՝

- ճանապարհների ու շավիղների ընդհանուր մակերեսը չպետք է գերազանցի գերեզմանատան ընդհանուր տարածքի 15 տոկոսը,

- կանաչապատման տեղամասերը չպետք է գերազանցեն գերեզմանատան ընդհանուր տարածքի առնվազն 20 տոկոսը,

Տարածքում կնախատեսվի ոռոգման համակարգ, խմելու ջրի ծորակ, հասարակական գուգարան, պարիսպ (ցանկապատ):

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

- Ընտանեկան գերեզմանների սահմանների միջև տարածությունը պետք է լինի առնվազն 0,5 մետր: Ընտանեկան գերեզմաններում գերեզմանատեղերի և անհատական գերեզմանատեղերի միջև տարածությունը պետք է լինի մեկ մետր երկարությամբ ու առնվազն 0.5 մետր լայնությամբ:
- Գերեզմանահորի խորությունը պետք է լինի առնվազն 1,5 մետր: Գերեզմանահորի հատակն ստորգետնյա ջրերի մակարդակից պետք է առնվազն 2,5 մետր բարձր լինի:
- Մահացածի աճյունը գերեզմանահորում տեղադրելուց հետո գերեզմանը ծածկվում է 0.5 մետր բարձրությամբ հողաթմբով, որի եզրերը պետք է լինեն գերեզմանահորի չափերից ավելին՝ գերեզմանահորը մակերևութային ջրերի թափանցումից պաշտպանելու նպատակով:
- Աճյունասափորների հուշապատի բարձրությունը պետք է լինի ոչ ավելի, քան 2.5 մետր, իսկ երկարությունը՝ գերեզմանատան հողերի օգտագործման հատակագծին (սխեմային) համապատասխան: Աճյունասափորները տեղադրվում են հուշապատի խորշերում (տրամագիծը՝ 0,2 մետր, խորությունը՝ 0,25 մետր) երեք հորիզոնական շարքով:
Խորշերի միջև տարածությունն ուղղահայաց և հորիզոնական ուղղություններով պետք է լինի առնվազն 1,0 մետր:
Յուրաքանչյուր աճյունասափորի համար տեղադրվում է սալաքար՝ 0,5 մx0,5 մ չափերով: Հուշապատի համար կարող է օգտագործվել գերեզմանատան պարիսպը:
- Գերեզմանատան մուտքի մոտ տեղադրվում են գերեզմանատան հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները:
- Գերեզմանատան տնօրինությունն ապահովում է գերեզմանատան տարածքի մաքրությունը և կազմակերպում աղբահանությունը:
- Գերեզմանատան տարածքը պետք է ապահովված լինի մակերևութային ջրերի հեռացման համակարգով:
- Գերեզմանատան հողատարածքներում, այդ թվում՝ սանիտարապաշտպանիչ գոտում արգելվում են դրանց նպատակային և գործառնական նշանակությանը հակասող ցանկացած գործունեություն, ինչպես նաև պտղատու ծառերի ու թփերի տնկումը:
- Գերեզմանատանը հարակից տարածքներում գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողատարածքները պետք է լինեն գերեզմաններից առնվազն 40 մետր հեռավորության վրա:
- Գերեզմանատան տարածքում արգելվում է բնակավայրերի խմելու և տնտեսական ջրամատակարարման ու ջրահեռացման ցանցերի տեղադրումը՝ բացառությամբ գերեզմանատան կարիքների համար տեղադրվողների:
- Գերեզմանատների տեղափոխման դեպքում չի թույլատրվում դրանց զբաղեցրած հողատարածքներն օգտագործել գյուղատնտեսական նպատակների համար:

Հիմնական տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ

1. Հողամասի մակերեսը – 5.323939 հա
2. Գյուղատնտեսական նշանակության հողից 0.1 հա տեղափոխվել է էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության ոլորտ մասնավոր գերեզմանատան կառուցելու նպատակով:
3. Ընդհանուր հողարկավորության ընտանեկան գերեզմանատների քանակը – 3800 ընտանեկան գերեզմանատեղ, առաջին փուլ 0.1 հա վրա – 70 ընտանեկան գերեզմանատեղ:
4. Կանաչապատ ատարածք – 400 քմ

2.4 ՏԵՂԱՄԱՍԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԼԻԹՈՂՈԳԻԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հետախուզահորերի և արխիվային նյութերի տվյալների՝ ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական ժամանակաշրջանի, էոպլեյստոցեն դարակարգի ինտիբրիտային տուֆերը, տուֆալավաները որոնց ծածկում են ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումները, վերջիններիս էլ ծածկում են ժամանակակից տեխնոցեն առաջացումները:

Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է գրունտների հետևյալ լիթոլոգիական տարատեսակներով (վերնից-ներքև)՝ հաշվի չի առնված ասֆալտ-բետոնե ծածկույթը:

Շերտ-1 Լիցքեր՝ կազմված խճի, խճավազի, մանրաբեկորների, տեղամասի որոշ հատվածներում կենցաղային և շինարարական աղբի և կավավազների խառնուրդից: Բեկորային նյութը բազալտային և հիմնականում տուֆային կազմի է: Գրունտը սակավ խոնավ է:

Շերտի բացված հզորությունը 0,3-ից-3,7 մետր է: Շերտը համատարած է: Դրանք ժամանակակից տեխնածին առաջացումներ են:

Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի III կարգ է:

Շերտ-2

Մայիտակահողեր (белоземь-կարբոնատային շերտ) դեղնավուն երանգով, փխրուն, տեղ-տեղ ցեմենտացած՝ խճաքարի տեսքով: Ունի լայն տարածում: Շերտի բացված հզորությունը 0,3-1,2 մետր է: Ժամանակակից էյուվիալ առաջացումներ: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի կարգ է (պայմանական):

Շերտ-3 Կավավազներ բաց շագանակագույն, թույլ խոնավ, պինդ և կիսապինդ թանձրությամբ, միջին խտության, խճի ու խճավազի պարունակությամբ 15-20%: Շերտի հորատված առավելագույն հզորությունը 2,5 մետր է: Ունի լայն տարածում: Դրանք ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ նստվածքներ են:

Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆԿ IV-5-82-ի կարգ է:

Շերտ-4 Տուֆեր կարմիր, գորշ և սև գույների, որոնք փոխվում են տուֆային հասցվածքի ուղղաձիգ ուղղությամբ, թույլ ծակոտկեն, թույլ ձեղքավորված, սալային տեսքով,

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

մասամբ մեծաբեկորային անջատումներով: Փորված խորությունների սահմաններում ունի մասնակի տարածում՝ տարածված է հետագոտվող տեղամասի հարավային հատվածում: Բացված հզորությունը մինչև 0,5 մետր է: Չորրորդական ժամանակաշրջանի, էոպլեյստոցեն դարակարգի հրաբխային ապարներ են:

2.5 Ելակետային տվյալներ

- **Հողային աշխատանքներ**

Տարածքում նախատեսվում է իրականացնել հարթեցման աշխատանքներ:

Հողային աշխատանքների ընթացքում օգտագործվելու է հետևյալ տեխնիկական միջոցները՝

- բուլդոզեր – 1 հատ
- էքսկավատոր -1 հատ
- ինքնաթափ – 1 հատ

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած 10տ աղբը տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի:

Մասնավոր գերեզմանատան ջրամատակարարումը և ջրահեռացումը կիրականացվի համափայն Վեոլիա Ջուր ՓԲԸ կողմից տրվող տեխնիկական պայմանների:

3. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

3.1 Ընդհանուր տեղեկություններ

Մայակովսկի համայնքը կազմավորվել է 1828թ.-ից Պարսկաստանի Սալմաստ գավառի Փայաջուկ և Հաֆտվան գյուղերից գաղթած ընտանիքներից: Սկզբում համայնքն անվանվել է «Շահապ», սակայն խորհրդային տարիներին այն վերանվանվել է ռուս մեծ գրող Ա. Մայակովսկու անվամբ:

Համայնքում բնակչության հիմնական մասի արմատները Արևմտյան Հայաստանից են: Իրաքից գաղթել են եզդիների մի քանի ընտանիքներ, այժմ դրանք կազմում են մոտ 40 ընտանիք, 200 բնակչությունով: Սահմանակից համայնքներն են Աբովյան, Արամուս, Նոր Գյուղ, Բալահովիտ, Ձորաղբյուր: Համայնքի մակերեսը – 12.7 քառ.մետր, հեռավորությունը մայրաքաղաքից – 22 կմ, բնակչության թիվը – 2164, բնակչության կազմը - հայեր, եզդիներ: Կրթական հաստատություններ միջնակարգ դպրոց, մշակութային հաստատություններ – գրադարան: Բնակչության հիմնական զբաղմունքը – գյուղատնտեսություն, անասնապահություն:

Հետազոտվող տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի վարչական տարածքում՝ հարավ-արևմտյան եզրամասային հատվածում և իրենից ներկայացնում է չկառուցապատված, բայց պարսպապատված տարածք:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքն իրենից ներկայացնում է Կոտայքի հրաբխային սարավանդի հարավ-արևմտյան եզրամասի փոքրաթեք դելյուվիալ լանջի մի հատված՝ հյուսիսից դեպի հարավ անկումով, որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը ըստ GoogleEarth ծրագրի տատանվում են 1350-1365 մետրերի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական ժամանակաշրջանի, Էոպլեյստոցեն դարակարգի ինզիբրիտային տուֆերը, տուֆալվաները որոնց ծածկում են ժամանակակից էյուվիալ-դելյուվիալ-պրոյուվիալ տեխնածին առաջացումները:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Տեղամասում փորված հետախուզահորերով գրունտային ջրերի հորիզոնը չի հատվել և ըստ ֆոնդային նյութերի դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն բացակայում են:



Պատասխան է
 Մայակովսկի համայնքի ղեկավար
 Վ. Բարսեղյան

ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Գազիկ Խաչատրյան
 Անուն, ազգանուն
 Կոտայք
 մարզ

իմ Հողատերացման հիմքը թիվ 16042013-07-0042 վկայական
 Մայակովսկի
 համայնք

2018թ.

Մասշտաբ 1:5000

Շ Ե Ն Ք, Շ Ի Ն ՈՒ Թ Յ Ա Ն

	ՀՈՂԱՄԱՍԻ	Անկյունային ընկճանկ (կետեր)	Կոորդինատները		Հեռավորությունը (մետր)	Մասնաճանապարհի անվանումները (հատվածները) (անվանումներ)	Հատվածի նույնանուն հատվածներ	Գործառնական նշանակությունը (անվանումներ)	Անկյունային ընկճանկ (կետեր)	Կոորդինատները		Հեռավորությունը (մետր)
			Y	X						Y	X	
Մակերեսը քմ (հա)	5.323939 հա	1	8466078.254	4455901.780	55.98		1	Պահակատուն				
Ծածկագիրը	07-043-0128-0252	2	8466080.050	4455957.730	45.14		2	Սահմանգույք	1	8466086.411	4456094.694	4.16
		3	8466079.687	4456002.871	39.97			2	8466084.060	4456098.126	3.86	
		4	8466077.592	4456042.789	54.31			3	8466087.244	4456100.308	4.16	
Նպատակային նշանակությունը	Գյուղատնտեսական	5	8466082.405	4456096.886	96.65			4	8466089.606	4456096.883	3.87	
		6	8466159.749	4456154.849	33.44			1	8466086.411	4456094.694		
Գործառնական նշանակությունը	Արդյունաբերական	7	8466188.079	4456172.622	9.62			2				
		8	8466196.980	4456176.308	20.62			1	8466088.514	4456075.848	2.28	
Հողամասը ժամրագրված է		9	8466217.566	4456175.599	24.46			2	8466088.695	4456078.121	3.28	
		10	8466241.235	4456181.755	23.13			3	8466091.961	4456077.837	2.28	
Կատարող	Վալերիկ Գալստյան (անդամագրություն)	11	8466261.980	4456191.975	31.55			4	8466091.632	4456075.576	3.13	
		12	8466288.329	4456209.328				1	8466088.514	4456075.848		

Կատարող
(անդամագրություն)
 Իրավունքորոշման վկայականի համարը 054 տրման ամիս, ամսաթիվը 15.12.2011 թ.
 Իրավաբանական անձի 282.64083 ԱԶ Վալերիկ Գալստյան

2018թ.
 տրման ամսաթիվը

3.2 Աշխարհագրական դիրքը եվ կլիման

Տարածքը հիմնականում ունի չոր ցամաքային կլիմա, որտեղ ամռանը տաք է, իսկ ձմռանը բավականաչափ ցուրտ: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 9.6° : Բացարձակ մինիմալ ջերմաստիճանը իջնում են մինչև -5.1° , իսկ առավելագույնը՝ $+22.7^{\circ}$: Տարեկան տեղումների քանակը տատանվում է 320-470 մմ սահմաններում, իսկ գոլորշունակությունը 800-1100 մմ: Տարեկան խոնավացման գործակիցը կազմում է 0.38-0.51:

Կլիմայական տեսակետից Արովյան քաղաքի տարածքը մտնում է չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով բնորոշվող գոտու մեջ:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Եղվարդ օդերևութաբանական կայանի տվյալների:

Օդի միջին ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-5.1	-3.2	2.4	9.3	14.3	18.6	22.7	22.7	18.5	11.7	4.8	-1.9	9.6

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Եղվարդ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
73	69	63	60	60	54	50	48	49	59	70	74	61

Տեղումների բնութագիրը ըստ Եղվարդ օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը _____ միջին _____, մմ մաքսիմալ օրական												տարեկա ն
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
34	36	43	58	64	39	23	13	16	39	36	35	436
30	28	42	40	42	29	53	45	35	39	37	28	53


Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Եղվարդ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Քամու բնութագիրը

4. Աղյուսակ 2.4.

ամիս	քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, % քամու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	ՀսԱր լ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
I	6	48	11	3	15	6	9	2	78
	1,7	1,8	1,7	1,5	1,7	1,9	1,8	1,7	
IV	5	48	7	3	17	10	8	2	50
	3,0	3,8	2,7	2,4	2,4	2,8	2,7	2,1	
VII	6	73	4	1	7	4	4	1	40
	4,9	5,5	4,9	1,7	3,0	2,5	3,0	1,8	
X	5	55	6	3	16	8	6	1	70
	2,7	3,1	2,1	1,9	1,9	2,3	1,8	2,2	

4.1 Հողերի նկարագրությունը և հողերի բնական տիպերի քարտեզը



- ① Մուգ-շագանակագույն մանրախճաքաքարոտ փոքր հզորության փոքր հզորության միջին և ուժեղ հողմահարված
- ② Մուգ-շագանակագույն մանրախճաքաքարոտ միջին հզորության մեծամասամբ կավավազային մշակովի
- ③ Մուգ-շագանակագույն մեծամասամբ փոքր հզորության կավային տեղ-տեղ թույլ հողմահարված
- ④ Մուգ-շագանակագույն հզոր կավային մշակովի
- ⑤ Շագանակագույն մանրախճաքաքարոտ կարբոնատային-ցեմենտացված փոքր հզորության կավավազային միջին հողմահարված
- ⑥ Շագանակագույն մանրախճաքաքարոտ միջին հզորության կավային թույլ հողմահարված մշակովի
- ⑦ Շագանակագույն մանրախճաքաքարոտ տեղ-տեղ կարբոնատային-ցեմենտացված փոքր հզորության կավավազային թույլ հզորության մշակովի
- ⑧ Բաց-շագանակագույն մանրախճաքաքարոտ տեղ-տեղ կարբոնատային-ցեմենտացված փոքր հզորության կավավազային միջին և ուժեղ հողմահարված
- ⑨ Բաց-շագանակագույն մանրախճաքաքարոտ տեղ-տեղ կարբոնատային-ցեմենտացված մեծամասամբ միջին հզորության կավային թույլ հողմահարված մշակովի
- ⑩ Բաց-շագանակագույն մեծամասամբ թույլ դիֆերենցված փոքր հզորության կավավազային մեծամասամբ միջին հողմահարված մշակովի
- ⑪ Բաց-շագանակագույն բերվածքային հզոր կավային մշակովի
- ⑫ Արմատական ապարների ելքերի և ուժեղ քարքարոտ թերի զարգացած հողերի համալիր

4.2 Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Այստեղ չկան գործող արդյունաբերական եւ խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ, համապատասխանաբար օդային ավազանը չի կրում անտրոպոգեն զգալի ազդեցություն: Մասնավոր գերեզմանատան տարածքում մշտական դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան: Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ անալիտիկ եղանակով: Դրա համար առաջարկվում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց: Ըստ ուղեցույցի, մինչեւ 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝


- Փոշի՝ 0.2 մգ/խմ;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/խմ;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/խմ;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/խմ:

4.3 Աղմուկի մակարդակ

Ներկայացվող տեղանքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն քանի որ դրանց երթևեկության ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձ չէ:

4.4 ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՋՐԵՐ

Կոտայքի մարզը գերազանցապես տեղակայված է Սևան-Հրազդան ջրային ավազանում, որը ներառում է Հրազդան, Մարմարիկ, Քասախ և Ամբերդ գետերը: Կոտայքի մարզի շատ փոքր մաս գտնվում է Արարատի ջրային ավազանում:



Հրազդան ԳԵՏԸ

Հրազդան գետը սկիզբ է առնում Սևանա լճից և ձգվում է մինչև Սևան քաղաք: Գետի ավազանն իր վերին հոսքի սահմաններում սահմանակից է Փամբակ լեռնաշղթային հյուսիսում, Ծաղկունյաց լեռնաշղթային արևմուտքում և Գեղամա լեռնաշղթային արևելքում: Ընդհանուր առմամբ, գետը հոսում է նեղ կիրճով: Երևանն անցնելուց հետո գետը հոսում է Արարատյան դաշտավայրով և թափվում Արաքս գետ: Գետի երկարությունը 141 կմ է, իսկ թեքությունը՝ 1,000 մ: Ջրհավաք ավազանի տարածքը (առանց Սևանա Սևանա լճի) է 2,560 կմ²:

Հիդրոերկրաբանական տեսանկյունից գետի ջրհավաք ավազանը բաժանվում է երկու զգալիորեն տարբեր մասերի. աջ ափին տիրում են հիդրոֆոբիկ շերտերը, մինչդեռ ի տարբերություն դրա, ձախ ափը կազմված է ճաքած ոչ ջրակայուն ապարներից: Ահա թե ինչու, գետի վտակները գլխավորապես աջ ափում են (Մարմարիկ, Դալար, Արայ):

Գետը հիմնականում լցվում է ձախ ափին գտնվող աղբյուրներից (Ակունք, Արգելթ, Արգնի, և այլն), որոնք իրենց հերթին սնվում են Գեղամա լեռնաշղթայից: Մարմարիկ գետը 37 կմ երկարության է, իսկ ջրհավաք ավազանը 427 կմ² է: Գետը սկիզբ է առնում Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթայից բխող աղբյուրներից և թափվում է Հրազդան գետ գետաբերանից 116 կմ հեռավորության վրա:

Հաշվի առնելով այն, որ Հրազդան գետն իր սկզիզբն է առնում Սևանա լճից, ունի էական թեքություն, հոսում է Արարատի դաշտավայրով և կենտրոնական շրջաններով, ինչպես նաև մայրաքաղաքի միջով, համարվում է երկրի ամենամեծ գետը: Գետն օգտագործվում է ջրամատակարարման, էներգիայի, հանգստի, ձկնաբուծության և այլ նպատակներով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում:

Հրազդան գետի գետի վերին ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս): Արգնի ՀԷԿ-ից ներքև, Դարբնիկ գյուղի մոտ և գետաբերանի հատվածներում /Երևանից ներքև/ ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս): Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է՝ (5-րդ դաս): Վատ որակը պայմանավորված է լուծված թթվածնի, ԹԿՊ, ամոնիում իոնի, ֆոսֆատ իոնի, մանգանի, վանադիումի, ընդհանուր ֆոսֆորի բարձր պարունակությամբ:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

4.5 Բուսական և կենդանական աշխարհ

Հայաստանի բնակչության բարեկեցությունը մեծապես կախված է կենսաբանական պաշարների առկայությունից, որոնք երկրի համար հանդիսանում են ռազմավարական ռեսուրսներ:


Կամայական գործունեության իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը կրող կենսաբազմազանության և էկոհամակարգերի մասին տվյալները հավաքագրվել և մշակվել են հիմնվելով կենսաբազմազանության վերաբերյալ ՀՀ-ում գերծող օրենքներից, ՀՀ-ի կողմից ստորագրված համապատասխան միջազգային կոնվենցիաներից և պայմանագրերից: Հավաքվել և վերլուծվել է ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալ շրջանին վերաբերող համարյա ամբողջ գիտական տեղեկատվությունը: Որից հետո համապատասխան մասնագետների կողմից իրականացվել է այցելություն ուսումնասիրվող տարածքներ ֆլորայի և ֆաունայի արդի վիճակը գնահատելու համար: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ շրջանին բնորոշ ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված բույսատեսակների և կենդանատեսակների առկայությանը:

Տվյալ տարածաշրջանը ենթարկված է անտրոպոգեն ազդեցության, իսկ բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են, ուսումնասիրվող տարածքում բուսականությունը գրեթե բացակայում է (տես՝ նկար 1):




Նկար 1. Ուսումնասիրվող տարածքը

Հայաստանի տարածքում առանձնացվում է 12 ֆլորիստիկ շրջաններ (տես՝ նկար 2): ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում (*Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ ակադեմիկոս Ա.Լ. Թախտաջյանի (1954)*) և չոր տափաստանային ցածրալեռնային (1000-1600 մ.ծ.մ) լանշաֆտային գոտում, որով և պայմանավորվում է տարածաշրջանի կենսաբազմազանությունը (տես՝ նկար 3): Ուսումնասիրվող տարածքի բացարձակ բարձրությունները տատանվում են 1350-13650մ-ի սահմաններում:



Նկար 2. Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները

Տվյալ տարածաշրջանի ֆլորայի վերաբերյալ գիտական տվյալները սակավաթիվ են, սակայն հավաքվել և վերլուծվել է տվյալ շրջանին վերաբերող համարյա ամբողջ գիտական տեղեկատվությունը: Որից հետո համապատասխան մասնագետների կողմից իրականացվել է այցելություն ուսումնասիրվող տարածք և հարակից տարածքներ՝ ֆլորայի արդի վիճակը գնահատելու համար: Հատուկ ուշադրություն է դարձվել տվյալ շրջանին բնորոշ (ՀՀ բույսերի Կարմիր գրքում 2010թ.) գրանցված բույսերի առկայությանը:



Նկար 3. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային գոտիները

Ուսումնասիրվող տարածքը ներկայացված է հիմնականում կիսաանապատային օշինդրա-էֆեմերային և տափաստանային բուսականությամբ: Հացազգի և հացազգի-տարախոտային տափաստանները հիմնականում շուղախոտ լեռնային տափաստաններ են՝ *Festuca valesiaca* ձևավորումները, բարակոտնուկ սանրավորի (*Koeleria cristata*), ծորնուկ խայտաբղետի (*Bromus variegata*), դաշտավլուկ սոխուկավորի (*Poa bulbosa*), սիգախոտ սիգախոտանման (*Phleum phleoides*) և տարազգի բուսականության մասնակցությամբ: Նարդեանների խմբավորումները աչքի են ընկնում իրենց բնորոշ դեղնականաչավուն գույնով, ամառվա սկզբին դրանց ցողունը սկսում է դեղնել, իսկ հուլիսին այդ բույսերի վերգետնյա հատվածը չորանում է: Ուսումնասիրվող տարածքում հանդիպում են նաև *Artemisia fragrans*, *Capparis herbacea*, *Achillea millefolium*, *Stipa capillata* բուսատեսակները:

ՀՀ Կոտայքի մարզում աճում են 54 տեսակի բույսեր, որոք գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Սակայն ուսումնասիրվող տարածքում և նրա շրջակայքում, ըստ առկա գրականության, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գնացված տեսակներ կամ դրանց աճելավայրեր չկան: Դաշտային հետազոտությունների արդյունքում նույնպես ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ կամ դրանց աճելավայրեր չեն հայտնաբերվել:

Ուսումնասիրվող տարածքում ծառափայլին բուսականությունը բացակայում է, չկան անտառային զանգվածներ:

Այսպիսով, ուսումնասիրվող տարածքում և նրա հարակից տարածքներում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես էլ բույսերի հազվագյուտ տեսակներ, քանի որ տարածքը մշտապես գտնվել է մարդկային գործունի ազդեցության տակ, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Ցամաքային կենդանիների դաշտային ուսումնասիրությունները իրականացվել են ընդունված մեթոդներով (Формозов, 1951, 1976, Новиков, 1953 և այլն), ինչպես նաև ուսումնասիրվել է տարածաշրջանի վերաբերյալ առկա համապատասխան գրականությունը:

Կաթնասունների դիտարկումները մեծամասամբ լինում են պատահական, առավել հաճախ գրանցվել են նրանց գործունեության հետքերը, որոնցից են օրինակ՝

- թաթերի հետքերը գրունտի և ցեխի վրա,
- կենդանիների կղանքը,
- հետքեր կապված կենդանու սննդառության հետ (սննդի մնացորդներ, կրծվածքներ, քերվածքներ և այլն),
- թաքստոցներ (բներ, որջեր, գաղութներ):

Տեղանքին բնորոշ կաթնասուններից առավել տարածված են՝ Սովորական ոզնի (*Erinaceus concolor*), Նապաստակ (*Lepus europaeus*), Քարակզաքիս (*Martes foina*), Աքիս (*Mustela nivalis*), Սովորական աղվես (*Vulpes vulpes*), Սոխրագույն համստերիկ (*Cricetulus migratorius*), Սովորական դաշտամուկ (*Microtus arvalis*), Սոխրագույն առնետ (*Rattus norvegicus*):

Թռչունների դիտարկումները իրականացվել են օգտագործելով հեռադիտակներ «Bushnell»: Ուսումնասիրվող և դրան հարակից տարածքների՝ կարճատև դաշտային հետազոտությունների, ինչպես նաև համապատասխան գրականության մշակման արդյունքները ներկայացված են ստորև: Թռչուններից տարածքում հանդիպող տեսակներն են՝ Տափաստանային ճուռակ (*Buteo rufinus*), Սովորական հողմավար բազե (*Falco tinnunculus*), Հոպոպ (*Upupa epops*), Դաշտային արտույտ (*Alauda arvensis*), Փուփուլավոր արտույտ (*Calerida cristata*), Սպիտակ խաղտոնիկ (*Motacilla alba*), Ժուլան (*Lanius collurio*), Պարոզ քարաթռչնակ (*Oenanthe isabellina*), Սև կեռնեխ (*Turdus merula*), Տնային ճնճղուկ (*Passer domesticus*), Դաշտային ճնճղուկ (*Passer montanus*), Սովորական սարյակ (*Sturnus vulgaris*), Սովորական ճայ (*Corvus monedula*), Սերմնաքաղ (*Corvus frugilegus*), Սովորական կաչաղակ (*Pica pica*), Սոխրագույն ագռավ (*Corvus corone*), Սև ագռավ (*Corvus corax*), Սովորական քարաթռչնակ (*Oenanthe oenanthe*), Դաշտային ձիաթռչնակ (*Anthus campestris*):

Հերպետոֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում ստացվել է գրականության մշակման և դաշտային հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա: Կապված բնական լանդշաֆտների ոչնչացման հետ, ինչի արդյունքում ոչնչացվեցին սողունների բնական ապրելավայրերը, նրանց տեսակային կազմը զգալի կրճատվել և փոփոխությունների է ենթարկվել: Հերպետոֆաունան ներկայացված է՝ Կանաչ դոդոշ (*Bufo viridis*), Գեղիքան օձազուխ (*Ophisops elegans*), Շերտավոր մողես (*Lacerta strigata*), Որդանման կույր օձ (*Typhlops vermicularis*), Կապարագույն սահնօձ (*Hemorrhois nummifer*), Զիթապտղագույն սահնօձ (*Platycephalus najadum*), Վզնոցավոր էյրենիս (*Eirenis collaris*), Հայկական էյրենիս (*Eirenis punctatolineatus*), Կովկասյան գյուրգա (*Vipera (Macrovipera) lebetina*): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածքը նախատեսված է կիրառել որպես գերեզմանատեղի և օգտագործվելու է աստիճանաբար, և այն, որ ուսումնասիրվող տարածքը և նրա շրջակայքը գտնվում է նույն լանդշաֆտային գոտում, կարելի է փաստել, որ

տարածքի հերպետոֆաունան զգալի ազդեցություն չի ունենա, քանի որ տարածքում հանդիպող սողունները հնարավորություն կունենան հեռանալու և վերաբնակվելու նույն կենսամիջավայրում:

Հետազոտվող տարածքում հանդիպող անողնաշարավորների տեսակային կազմը որոշվել է գրականության և դաշտային այցելությունների ընթացքում ստացված տվյալների վերլուծության արդյունքում: Տարածքի անողնաշարավորները ուսումնասիրված են խիստ անհավասարաչափ: Անողնաշարավորների ֆաունան ներկայացնող կարգաբանական խմբերից տարածքում հանդիպում են Հողվածոտանիների տիպի, Միջատների դասի Բզեզների (*Coleoptera*) կարգից մոտ 70 տեսակ, Ցերեկային թիթեռների (*Lepidoptera-Rhopalocera*) ենթակարգից մոտ 15 տեսակ, Փափկամարմինների (*Mollusca*) տիպի մոտ 3 տեսակ, Ծղրիդներից մոտ 15 տեսակ:


Ամենայն հավանականությամբ միջատների տեսակային կազմը նույնպես կրել է զգալի փոփոխություններ՝ ևս կապված բնական լանդշաֆտի ոչնչացման հետ: Ուրբանիզացիայի, արդյունաբերության և գյուղատնտեսության հետևանքով առաջացած բուսական ծածկույթի գրեթե լիովին փոփոխությունը հանգեցրեց միջատների տեսակային և քանակական կազմերի զգալի փոփոխություններին:

Կոտայքի մարզում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված է Անողնաշար կենդանիների 62, Ողնաշարավոր կենդանիների 28 տեսակներ: Հարկ է նշել, որ ուսումնասիրվող և նրա հարակից տարածքներում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների վիզուալ հանդիպումներ չեն գրանցվել: Չեն հայտնաբերվել նաև դրանց կենսագործունեության հետքեր (ոտնահետքեր, կերի մնացորդներ, էքսկրեմենտների քանակ, փորվածքներ, բներ, հանգստավայրերի առկայություն, կղկղանք), ինչը բացատրվում է տվյալ տարածաշրջանի բավականին ուրբանիզացված լինելով, բնական էկոհամակարգերի խիստ փոփոխված և դեգրադացված լինելով հանգամանքով: Կան սակայն մի շարք կենդանատեսակներ, որոնք բավականաչափ հանդուրժող են մարդկային միջամտության նկատմամբ, և մնում են տեղում (օրինակ՝ նապաստակը, ոզնին և այլն): Բացի այդ, որոշ տեսակներ կարող են բավականաչափ հարմարվողական կենսակերպ վարել նոր պայմանների նկատմամբ (օրինակ՝ աղվեսը կամ որոշ թռչնատեսակներ):

Այսպիսով, ուսումնասիրվող տարածքում և նրա հարակից տարածքներում բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես էլ կենդանիների հազվագյուտ տեսակներ, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացած է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը (տես՝ նկար 4):




Նկար 4. Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները

Ուսումնասիրվող տարածքը անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Ուսումնասիրվող տարածքից ավելի քան 20կմ դեպի հյուսիս գտնվում է՝ «Արգան-Մեղրաձոր» պետական արգելավայրը, իսկ դեպի հարավ, ավելի քան 12կմ հեռավորության վրա է գտնվում «Էրեբունի» պետական արգելոցը (տես՝ նկար 5): Ուսումնասիրվող տարածքին մոտ գտնվող բնության հուշարձանները երեքն են, որոնք տարածքից գտնվում են ավելի քան 5կմ հեռավորության վրա: Բնության հուշարձանների ցանկը և բնութագիրը բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1.	«Քաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արգնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա:
2.	«Համով» աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա:
3.	«Ավազան» աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա:



Նկար 5. Ուսումնասիրվող տարածքի հեռավորությունը մատակա ԲՀՊՏ-ներից

Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային հարաբերությունների լիիրավ անդամ, վավերացրել է կենսաբազմազանությանն առնչվող մի շարք միջազգային բնապահպանական պայմանագրեր, կոնվենցիաներ և համաձայնագրեր, որոնցով ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը նպաստում է շրջակա միջավայրի և կենսաբազմազանության արդյունավետ պահպանությանը:

Եվրախորհրդի Բեռնի կոնվենցիայի ներքո Հայաստանում «Էմերալդ» ցանցի ստեղծման ծրագրի շրջանակներում առանձնացվել են նաև բնապահպանական տեսակետից մի շարք արժեքավոր տարածքներ: 2018 թվականի ընթացքում իրականացվել են լրացուցիչ ուսումնասիրություններ, վերլուծվել են ստացված տվյալները, որոնց հիման վրա էլ կատարվել են «Էմերալդ» ցանցի տարածքների վերանայման և սահմանների օպտիմալացման աշխատանքներ: Այսպիսով՝ Հայաստանում «Էմերալդ» ցանցի կազմում ընդգրկվելու համար առաջարկվող 28 պոտենցիալ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 455645.7 հա (հանրապետության տարածքի 15.3%):

Ուսումնասիրվող տարածքը ներառված չէ «Էմերալդ» ցանցի մեջ և նրա հետ անմիջական սահմաններ չունի:

Միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ

1. «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
2. «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
3. «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
4. «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
5. Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
6. «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
7. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)

5. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

5.1 Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում և մասնավոր գերեզմանատունը չի կառուցվում: Այս դեպքում՝

- Բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված լրացուցիչ ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- Կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնածին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- Համայնքի բնակչության սպասարկման որակի բարելավում:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորություններ չեն լինի:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը բացահայտելու, վերլուծելու և գնահատելու նպատակով անհրաժեշտ է նույնականացնել բոլոր այն գործընթացները, սարքավորումները, օգտագործվող նյութերն ու ռեսուրսները, որոնք յուրաքանչյուրն առանձին կամ որաշակի գուգակցմամբ կարող են առաջացնել օդային և ջրային ավազաններ վնասակար նյութերի արտանետումներ և արտահոսքեր, վտանգավոր թափոններ, ինչպես նաև ազդել տարածաշրջանի կենսաբազմազանության վրա:

6.1 Մթնոլորտային արտանետումներ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են.

- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների աշխատանքից առաջացող գազանման արտանետումները,
- հողային/հարթեցման աշխատանքներից և շահագործվող տեխնիկայի շարժից առաջացող փոշին:

Շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները, որոնք պլանավորվում է օգտագործել գործունեության իրականացման ժամանակ, հանդիսանում են չկազմակերպված արտանետումների հիմնական աղբյուրները:

6.2 Մթնոլորտային արտանետումներ

ա) Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումների հաշվարկը

Հաշվարկները կատարված են գործող մեթոդակարգի համաձայն:

$Q = (P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times G \times 106 \times B \times P6) / 3600$ տ/ժամ, որտեղ (1) հողային

P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0.05

P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.0

P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.2

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.6

G վերամշակվող գրունտի քանակը, 200 խմ: Հողային աշխատանքների տևողությունը ըստ աշխատանքային նախագծի ժամանակացույցի կազմում է 2 ամիս, 26 օր ամսեկան 2 ամիս x 26 օր x 8 ժամ/օր = 416 ժամ/շին. ժամ:

G - 200 խմ:416 ժամ = 0.48 խմ /ժամ կամ հաշվի առնելով տեսակարար կշիռը՝
0.48 խմ/ժամ x 2.7 տ/մ³ = 1.297 տ/ժամ

$Q = (0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.2 \times 0.5 \times 1.297 \times 10^6 \times 0.6 \times 1.0) / 3600 = 0.022$ գ/վրկ

0.022 գ/վրկ x 416 ժամ x 3600վրկ/ժամ : 1000000 = 0.033 տ/շին.ժամանակահատված:

բ) Փոշու արտանետումների հաշվարկը շինարարական տեխնիկայի աշխատանքի դեպքում

Շինարարական տեխնիկայի աշխատանքների ընթացքում իրականացվում է տեղանքի հարթեցում, հանվող հողային զանգվածի և առաջացած թափոնների տեղափոխում ավտոինքնաթափ մեքենաներով: Հաշվի են առնվում շինարարական հարթակում անընդհատ աշխատող տեխնիկայից առաջացած արտանետումները:

Տրանսպորտի շարժման ժամանակ մթնոլորտ է արտանետվում փոշի: Տրանսպորտի շարժը տեղի է ունենում ամբողջ շինարարության ընթացքում՝ 2 ամիս կամ 416 ժամ:

Մթնոլորտ արտանետվող փոշու քանակը որոշվում է նշված մեթոդակարգի համաձայն /3/:

$$Q_{\text{տր.}} = (C_1 \times C_2 \times C_3 \times N \times L \times q_1 \times C_6 \times C_7) / 3600 + C_4 \times C_5 \times C_6 \times q_2 \times F_0 \times n$$

բանաձևով, որտեղ՝

C₁ – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռնանակությունը, C₁ = 1.0

C₂- գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը, C₂ = 1.0

C₃ - գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը, C₃ = 0.1

N – ամբողջ տրանսպորտի վազքընթացների թիվն է ժամում, N = 1

L – մի վազքի միջին երկարությունն է, կմ L = 0.05 կմ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

C_4 - գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմայի վրա նյութի մակերևույթի պրոֆիլը,
 C_4 – ը տատանվում է 1.3 – 1.6-ի սահմաններում $C_4 = 1.3$
 F_0 –պլատֆորմայի միջին մակերեսն է , $F_0 = 12$
 C_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը, $C_5 = 1.0$
 C_6 - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը $C_6 = 0.2$

C_7 - գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը, ընդունում ենք՝ $C_7 = 0.01$

q_1 – 1կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ $q_1 = 1450$ գ

q_2 – նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները, q/m^2 վրկ
 $q_2 = 0.002$

n – ավտոմեքենաների թիվն է $n = 3$

$Q_{\text{տր.}} = (1 \times 1 \times 0.1 \times 1 \times 0.05 \times 1450 \times 0.2 \times 0.01)/3600 + 1.3 \times 1.0 \times 0.2 \times 0.002 \times 12 \times 3 = 0.019$

գ/վրկ

$Q_{\text{տր.}} = (0.019 \times 416 \times 3600)/10^6 = 0.0285$ տ/շին. ժամանակահատված

գ) Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները

Մթնոլորտային օդը աղտոտվում է ժանր տեխնիկայի աշխատանքի ընթացքում՝ դիզելային վառելիքի այրման հետևանքով առաջացած արտանետումներով, որոնք հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակված <<Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման>> մեթոդական հրահանգի հիման վրա: Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները (բացառությամբ ծծմբային անհիդրիդի) բերված են ստորև:

Աղյուսակ 5. Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO _x	CH	ՑՕՄ	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները, կախված ավտոմոբիլային պարկի միջին տարիքից և տեխնիկական վիճակից, բերված են ստորև աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները

Ավտոմեքենաների կատեգորիան	Վնասակար նյութը	Ազդեցության գործակիցը	
		պարկի միջին տարիքը	տեխնիկական վիճակը
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	NO _x	1.0	1.0
	CH	1.2	2.0
	CO	1.33	1.8
	N ₂ O	1.0	1.0
	CO ₂	1.0	1.0

Ածխածնի օքսիդի (CO), ածխաջրածինների (CH), ազոտի օքսիդների (NO_x) գործակիցները վերցված են <<Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներից>> (Մոսկվա, Հիդրոմետհրատ - 1983), իսկ ածխածնի երկօքսիդի (CO₂) և ազոտի երկօքսիդի (N₂O) գործակիցները ընդունվել են 1, քանի որ որևէ այլ մեծություններ դրանց համար չեն առաջարկվում:

Ընդամենը շինարարության ընթացքում անընդհատ շահագործվելու են 3 հատ տեխնիկական միջոց, որոնք օգտագործում են դիզելային վառելիք: Դիզվառելիքի միջին օրական ծախսը կկազմի՝ 60 լ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $60 \times 0.835 = 50.1$ կգ/օր: Ծանր տեխնիկայի և բեռնատար մեքենաների աշխատանքը կիրականացվի ամբողջ շինարարության ընթացքում:

Աղյուսակ 7. Վնասակար նյութերի արտանետումները

